ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ

ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻՋԵՒ ՀԱՄԵՐԱՇԽ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Մուտք

Քրիստոնէական եկեղեցու պատմութեան առաջին հազարամեակի ընթացքին առաջացած դաւանական, ծիսական, կարգապահական խախտումները կարգաւորում էին Տիեզերական ժողովների միջոցով։ Այսպէս Աղեքսանդրեան-Անտիոքեան աստուածաբանական դպրոցների հակամարտութիւնները աւարտում են Սուրբ Երրորդութեան դաւանանքի բանաձեւմամբ՝ առաջին երեք Տիեզերական ժողովների որոշումների ընդունմամբ (325 թ., 381 թ., 431 թ.)[1]։ Առաջին մեծ բաժանումը Ընդհանրական եկեղեցում տեղի է ունենում Քաղկեդոնի ժողովի (451 թ.) պատճառով, որը հետեւանքն էր Հռոմի Լեւոն Պապի եւ Աղեքսանդրիայի Կիւրեղ Եպիսկոպոսի միջեւ՝ «Մի Քրիստոս յերկուս բնութիւն» *միակեցութեան բանաձեւումի շուրջ։ Ժողովի բանաձեւած նոր «Հաւատոյ Սահմանումը» եւ Լեւոն Պապի տոմարի պարտադրանքը բաժանում է եկեղեցին երկու ընտանիքների՝ Քաղկեդոնական եւ ոչ Քաղկեդոնական (Միաբնակ եւ Երկաբնակ) խմբակցութիւնների։ Երկրորդ բաժանումը տեղի ունեցաւ 1054 թ. Յոյն եւ Լատին եկեղեցիների միջեւ՝ Սուրբ Հոգու բխման* (Ֆիլիոքուէի) *եւ Հռոմի Պապի գերագահութեան հաւակնութեան շուրջ[2]։*

Եկեղեցու առաջին շրջանը յատկանշական է եօթ Տիեզերական ժողովներով, որոնցից Հայ եկեղեցին ընդունում է երեքը, իսկ Բիւզանդական եկեղեցին՝ եօթը։ 1054 թ. յետոյ Կաթոլիկ եկեղեցին շարունակել է հաւաքներ գումարել՝ դրանք համարելով Տիեզերական (վերջինը Վատիկանի 2-րդ ժողովն էր, որ տեղի ունեցաւ 1962-1965 թթ.)։

Այսօր Տիեզերական ժողովներ գումարելու շրջանն անցել է պատմութեան գիրկը եւ դրանց տեղը բռնել է Միջեկեղեցական երկխօսութեան նախաձեռնութիւնը՝ Համաշխարհային Եկեղեցիների Խորհրդի հովանաւորութեան ներքոյ։ Այսպէս՝ Արեւելեան ոչ Քաղկեդոնական եւ Հռոմի կաթոլիկների աստուածաբանների միջեւ 1971-1988 թթ.

---

[1] Նիկիայի 2-րդ ժողովը դատապարտում է պատկերամարտիկներին եւ վերականգնում պատկերապաշտներին։ Հայ եկեղեցու մէջ պատկերամարտութեան կողմնակիցներ էին Պաւլիկեան եւ Թոնդրակեան աղանդաւորները։ Եկեղեցական գրականութեան մէջ, օտար վարդապետների շարքում պատկերամարտութեան դէմ գրած առաջին ընդդիմախօսութիւնը Վրթանէս Քերթողի «Յաղագս պատկերամարտից» թուղթն է։ Տես՝ **Արիստակէս Եպս. Սեդրակեան**, «Հայաստանեայց եկեղեցու պատկերայարգութիւնը», «Պատմական տեսութիւն», Ս. Պետերպուրկ, 1904; **Երուանդ Մելքոնեան**, «Վրթանէս Քերթողը եւ պատկերամարտութիւնը», Ս. Էջմիածին Յունիս-Յուլիս (1970), էջ 86-97։ Բնագրի ֆրանսերէն թարգմանութեան համար Տե՛ս **S. Der Nersessian,** “Une Apologie des images du Septieme siecle” Etudes Byzantines et Armeniennes = Byzantine and Armenian Studies, Louvain, 1973, pp. 379-403,

[2] **Dvornik**, **Francis**, The Ecumenical Councils, New York, 1961; S. L. Greenslade, Schism in the Early Church. What light can the past throw?, SCM London, 1964; Steven Runciman, The Eastern schism. A study of the papacy and the Eastern churches during the XI and XII centuries, Oxford, 1956; **Ներսէս Քհնյ. Ներսէսեան**, «Տիեզերական ճանաչում ստացած եկեղեցական ժողովների հեղինակութեան եւ անսխալականութեան աղբիւրները» եւ «Եպիսկոպոսաց ժողովը Հայ եկեղեցւոյ պատմութեան մէջ. Եպիսկոպոսաց ժողովի օրակարգի պատրաստման յանձնախումբ։ Ձեկուցումներ, Ս. Էջմիածին (2003), էջ 38-56 եւ 78-86։

կայացել են հինգ ոչ պաշտօնական երկխօսութիւններ եւ չորս խորհրդակցութիւններ Ուղղափառ եկեղեցիների հետ (1964 թ., 1967 թ., 1970 թ., 1971 թ.)։

Սոյն յօդուածում անդրադարձել ենք Ուղղափառ եւ Կաթոլիկ եկեղեցիների միջեւ երկխօսութիւնների մէջ քննարկուող խոչընդոտներին եւ սպասուելիք լուծումներին։

Ինչո՞ւ պէտք է տարբեր եկեղեցական հարանմանութիւններն արժէքաւորեն միջ-եկեղեցական երկխօսութիւնները։ Ուղղափառ եկեղեցիներին պատկանող շատ համայնքներ երկխօսութիւնը համարում են ժամանակի վատնում։ Ինչպէ՞ս պէտք է պայքարել այս մտածելակերպի դէմ։

Առաջին եւ ամենաբացայայտ պատասխանն այն է, որ եկեղեցիները հետապընդում են երկխօսութիւնը որպէս հնազանդութիւն Քրիստոսի արտայայտած կամքին։ Վերջին Խորհրդաւոր Ընթրիքին ի՞նչ հրահանգ տուեց Նա իր աշակերտներին։ Շատ վրճռական եւ զգացական պահ էր այդ, որովհետեւ գիտէր, որ իր ձերբակալումը եւ մահը հեռու չէ, ուստի որոշում է խօսել միութեան մասին. «Զի ամենեքեան մի իցեն» (Յովհ. 17։21)[3]։ Աղօթում է նրանց հետ, քանի որ, եթէ եկեղեցիներն իրենց նուիրում են երկխօսութեանը, դա անում են, որովհետեւ ցանկութիւն ունեն ձայնակցելու եւ իրականացնելու Տիրոջ պատուերը։

Այս կարող ենք հիմնաւորել մի երկրորդ պատճառով, որն արտացոլանքն է մարդ էակի նկարագրի ամենահիմնական յատկանիշներից մէկի։ Մարդ կարիքն ունի երկխօսութեան, քանի մարդ էակն իր իսկ բնութեամբ երկխօս արարած է։ Նա ունի բնածին ընդունակութիւն՝ ուրախութեան եւ ողբերգութեան։ Մարդը միայն տրամաբանութիւն ունեցող արարած չէ՝ շնորհուած ինքնաճանաչութեամբ, այլ էակ, որն ունի ընդունակութիւն մտածելու եւ արտայայտուելու՝ ամենաարտայայտիչ եղանակով։ Մարդ էակը նաեւ ընդմիշտ կապի մէջ է իր արարչի հետ՝ աղօթքով։ Մարդը նաեւ «քաղաքական» արարած է՝ ստեղծուած Աստուծոյ կողմից ապրելու համար՝ կազմակերպուած համայնքներում կամ քաղաքներում։ Այլ խօսքով, մարդը երկխօս եւ ընկերական արարած է, որն իրեն լիուլի ճշմարտապէս արժեւորում է, երբ երկխօսութեան մէջ է մտնում իր նմանների հետ։

«Անապատի Հայրերի ասացուածքներ»-ի գրքում այս պատմութիւնն է պատմում. Եգիպտոսի Հայր Մակարիոսը, մի օր քայլելիս անապատի մէջ երկխօսութեան մէջ է բռնւում ճանապարհի եզրին նետուած մի մեռած մարդու գանկի հետ։ Քնքշօրէն գանկին դիպչելով հարցնում է. «Ո՞վ ես դու»։ Գանկը պատասխանում է. «Ես կուռքերի քահանայապետ էի, որոնց պաշտում էին այստեղ բնակուող հեթանոսները»։ Գանկը շարունակում է իր խօսքը՝ յայտնելով, որ ինքն այժմ գտնւում է դժոխքի տանջանքների մէջ, եւ հայցում է Մակարիոսին, որ իր համար աղօթի, որպէսզի մի քիչ հանգիստ վայելի։ «Ի՞նչ է այդ հանգիստը, որին ձգտում ես»,- հարցնում է Մակարիոսը. «Ի՞նչն է քեզ տանջում, ի՞նչն է բնոյթը քո տառապանքի»։ «Այս է բնոյթը մեր տառապանքի»,- պատասխանում է գանկը. «մենք մէկս միւսին կապուած ենք կռնակ առ կռնակ եւ չենք կարողանում իրար տեսնել երես առ երես, աղօթիր մեզ համար, որ ամէն մէկս կարողանանք տեսնել մէկս միւսի երեսը կիսաչափ։ Եւ սա կը լինի մեր հանգիստը»[4]։

---

[3] **Arch. Tiran Nersoyan**, “This is the day”, Five Vienna Consultations, 1971, 1973, 1976, 1978, 1988, PRO- Oriente, Vienna, 1993, pp. 277-79. Տիրան Արք. Ներսոյեանի քարոզը՝ խօսուած Ս. Ստեփանոսի Տաճարում, Սեպտեմբեր 17, 1978 թ.՝ Կարդինալ Կօնիգի մատուցած եպիսկոպոսական պատարագի ընթացքին։

[4] Macarius/Simeon of Egypt (4th-5th cent.) Saying of the Desert Fathers, pg 65.

Այս է էութիւնը դժոխքի. չկարողանալ իրար տեսնել երես առ երես, չկարողանալ յարաբերուել եւ չկարողանալ իրար սիրել։ Սարթրի [Sartre] ասածով՝ "L'enfer, c'est les autres", այսինքն՝ «դժոխքը օտար մարդկանց համար է», բայց նա սխալւում էր։ Տ. Ս. Էլիոթ [T. S. Eliot] աւելի մօտ է ճշմարտութեանը, երբ իր "The Cocktail Party" բանաստեղծութեան մէջ գրում է.

«Ի՞նչ է դժոխքը։ Դժոխքը ինքը մարդն է.
Դժոխքը միայնակ է. միւս կերպարները
Պարզ լուսարձակումներ են. չկայ փախչելու որեւէ բան
Եւ ոչնչից փախչելու։ Մէկը մշտապէս միայնակ է»։

Վաղ շրջանի քրիստոնեաները այս վիճակը որակում էին այս ասացուածքով՝ "Unus Christianus, nullus Christianus", այսինքն՝ «մէկ քրիստոնեան քրիստոնեայ չէ»։ Այս ասացուածքը կարելի է ընդարձակել եւ ասել. "Una Persona, nulla persona", որը թարգմանւում է այսպէս. եթէ մէկը մեկուսացած է ուրիշներից եւ մերժում է յարաբերուել եւ երկխօսել, իրական մարդ չէ ըստ պատկերի եւ ըստ նմանութեան Սուրբ Երրորդութեան[5]։ Այս կէտը շատ յստակօրէն ընդգծւում է յունարէնում «անձ» բառի մէջ՝ «պրոսոպօն» (prosopon), որը բառացիօրէն նշանակում է «դէմք» կամ «երես, կերպարանք»։ «Ես իրական անձ չեմ, եթէ չունեմ կարողութիւն՝ նայելու դիմացինի աչքերին եւ թոյլ տալու, որ նա էլ նայի իմ աչքերին»։

Այս հայեցակէտը շատ համոզիչ կերպով բանաձեւում է Յովհաննէս Մակմարրին՝ [John Macmurray] իր տուած Քիֆֆորդի անուամբ դասախօսութիւնների երկրորդ շարքում։ Իր՝ «Անձին» նուիրուած դասախօսութեան մէջ գրում է. «անձը միայն գոյութիւն ունի, երբ սերտ դինամիկ յարաբերութեան մէջ է ուրիշի հետ»[6] եւ աւելացնում՝ հետեւաբար «ես» կարիքը ունեմ «մէկ ուրիշի», որպէսզի ինքս ինձ գտնեմ իմ մէջ»[7]։ Որքան այս վերաբերում է անհատին, ոչ պակաս չափով վերաբերում է նաեւ կրօնական համայնքներին։ Որպէս բաժանեալ եկեղեցիների անդամներ, մենք պէտք է ասենք մէկս միւսին՝ «ես քո կարիքը ունեմ, որպէսզի լինեմ ամբողջական։ Դրանից այն կողմ, որպէս անհատներ մեծ կրօնական համայնքների՝ Հրեայ, Հնդիկ, բուդիստ, քրիստոնեայ եւ մահմետական, պէտք է նոյնը ակնկալեն միմեանցից։

Հետեւաբար այս է պատճառը, որ մենք պէտք է երկխօսութեան բռնուենք միմեանց հետ, թէկուզ մեր անհատական համայնքի անհատների հետ կամ միջեկեղեցական հարթակի վրայ։ Երկխօսութիւնն այս պարագային պերճանք չէ եւ ոչ էլ այլընտրանք բարեմասնութեան։ Հետեւաբար, այն երկխօսութիւնները, որ տեղի են ունենում տարբեր եկեղեցական համայնքների միջեւ՝ Ուղղափառ եւ Կաթոլիկ, Կաթոլիկ եւ Անգլիական, ինչպէս եւ Արեւելեան հինգ եկեղեցիների, չպէտք է սահմանափակուի աստուածաբանների եւ մասնագէտների շրջանակներում, այլ ամէն մէկիս որպէս քրիստոնեայ եւ մարդ էակ։ Այս համատեքստում է, որ մենք պէտք է դիտենք բոլոր երկխօսութիւնները քրիստոնեայ եկեղեցիների ոլորտում։

Որո՞նք են աստուածաբանների առաջնակարգ խնդիրները

Վերջին անգամ, երբ Կաթոլիկները, Ուղղափառները եւ Արեւելեան եկեղեցիների

[5] **W. Kallistros**, 'The human person as an icon of the Trinity', Sobornost/Eastern Churches Review 8:2 (1986), pp. 6-23.

[6] **J. Macmurray**, Persons in relation, London, 1961, pg. 17 [Gifford Lectures].

[7] **J. Macmurray**, նշ. աշխ., pg. 69.

ներկայացուցիչները միատեղ հաւաքուեցին ամենաբարձր մակարդակով՝ Ֆերրարա-Ֆլորենս (1438-39) ժողովն էր, որը Կաթոլիկ Եկեղեցին համարեց Տիեզերական ժողով։ Ժողովականները մօտ տաս ամիս (որոշ ընդմիջումներով) վիճեցին զանազան դաւանական, եկեղեցաբանական, ծիսական հարցերի շուրջ.

Ա. Սուրբ Հոգու բխման եւ Ֆիլիօքուէ (Filioque) տերմինի յաւելումը Հաւատոյ Հանգանակին[8]*։*

Բ. Չորս ամիս (դարձեալ որոշ ընդմիջումներով) յատկացրին Դժոխքի եւ Սրբերի միջնորդութեան հարցին։

Գ. Պապի գերագահութեան խնդրին յատկացրին տաս օր՝ դա էլ ժողովի աւարտին[9]*։*

Տաս ամիս Սուրբ Հոգու բխման խնդրին եւ տաս օր Պապի նախաթոռութեան յաւակնութեանը։ Այս էր ժողովի առաջնակարգ խնդիրների հերթականութիւնը 15-րդ դարում։ Այսօր՝ 21-րդ դարում, խնդիրների առաջնահերթութիւնները միանգամայն տարբեր են[10]*։*

Որոշ Ուղղափառ աստուածաբաններ, թէեւ ոչ բոլորը, շարունակում են Ֆիլօքուէ [Filioque] տերմինի յաւելումը, եւ տարբեր մօտեցումները Սուրբ Հոգու առաջացման՝ մնում է Արեւմուտքում եւ Արեւելքում միութեան շատ լուրջ արգելք[11]*. եւ կան աւելի փոքր թուով Կաթոլիկ աստուածաբաններ, որ համամիտ են նրանց կեցուածքին։ Իսկ ներկայում թէ՛ Ուղղափառ, եւ թէ՛ Հռոմէական Կաթոլիկները համամիտ են, որ երկու յարանուանութիւնների միջեւ, ոչ թէ Սուրբ Հոգու աստուածաբանութիւնն է առաջնակարգ, այլ Հռոմի եպիսկոպոսի դերի եւ առաքելութեան հասկացողութիւնը տիեզերական համատեքստում։ Վերջին երկու տասնամեակներում թէ՛ Կաթոլիկները, եւ թէ՛ Ուղղափառները հակուած են ընդգրկելու մի եկեղեցաբանութիւն, որ կոչւում է* koinonia (koinonia) *կամ յաշտ հաղորդակցութիւն։ Բայց այս հասկացողութիւնը միատարր չի ընկալւում կամ գործադրւում։*

Լաետենտուր Կաէլի (Laetentur Caeli) *միութեան հաղորդագրութեան մէջ, որ Ֆլորենսիայի ժողովը 6 Յուլիս, 1439 թ.*[12] *հռչակեց, հինգ կարեւոր կէտեր է առանձնացնում՝ Սուրբ Հոգու բխման հարցը, Ֆիլօքուէ տերմինի յաւելումը հանգանակին, անխմոր հա-*

---

[8] Հայոց եկեղեցին չի ընդունում «եւ որդւոյ» յաւելումը։ Մխիթարեանները Հայ եկեղեցու դաւանանքը անխոհեմաբար աղաւաղելով՝ Գրիգոր Նարեկացուն եւ Ներսէս Շնորհալուն պապական դարձնելու համար նրանց երկերի հրատարակութիւնների մէջ «ի Հօրէ Բղխեալ»-ը, դարձնում են «բղխեալ ի Հօրէ եւ յՈրդւոյ»։ Հայ եկեղեցին իր Ժամագրքում ունի այս բանաձեւումը. «Հաւատամք զՍուրբ Հոգին Աստուած՝ անեղ, անժամանակ. ոչ ծնեալ, այլ բղխեալ ի Հօրէ, էակից Հօր եւ փառակից Որդւոյ», որը նման է Գրիգոր Նարեկացու եւ Ներսէս Շնորհալու ուսուցմանը։ Տե՛ս **Նորայր Եպս. Ծովական**, «Մատենախօսական։ Հայոց Եկեղեցին», «**Սիոն**» Յունուար (1963), էջ 14-19։

[9] **Ն. Աւ. Քհնյ Ներսէսեան**, «Տիեզերական ճանաչում ստացած եկեղեցական ժողովների հեղինակութեան եւ անսխալականութեան աղբիւրները», Եպիսկոպոսաց ժողովի օրակարգի պատրաստման յանձնախումբ։ Զեկուցումներ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2003, էջ 38-56 (Արտատպուած՝ «Սիոն», 1992 թ. թիւ 1-2-3, Յուն.-Փետր.-Մարտ, համարից)։

[10] Կաթոլիկ-Ուղղափառ բանակցութիւնների մասին աւելի մանրամասն տեղեկութեան համար Տե՛ս **W. Kallistros**, " The Orthodox Church and the Primacy of the Pope: Are we any closer to a solution?, in Album Accademico **2008-2009**, Pontificio Istituto Orientale, pp.44-59; **J. Chryssavagis** (ed.), Primacy in the Church: The office of Primate and authority of Councils, vol. 2, St. Vladimir's Seminary Press, **2016**, pp. 861-88, **J. Meyendorff & others**, The Primacy of Peter in the Orthodox Church, The Faith Press, **1963**.

[11] **Ն. Աւ. Քհնյ Ներսէսեան**, «Սուրբ հոգու ըմբռնումը (Filioque)», «**Հասկ**», Սեպտեմբեր (2013), էջ 942-956։

[12] Ժողովի բնագիրը տե՛ս Tanner Norman P (ed.), Decrees of the Ecumenical Councils, George Town University Press, **1990**, vol. I, pp. 523-538 (Յունարէն, լատիներէն եւ անգլերէն), հմմտ. Joseph Gill, The Council of Florence, Cambridge University Press, **1959**, pp. 412-415 (Բնագիրը Լատիներէն)։

ցի կիրառութիւնը Պատարագի մէջ, հանգուցեալների վիճակը եւ Պապի առաջնութեան պահանջքը[13]*։ Բայց երբ 1980 թ. Պատմոսի Սուրբ Յովհաննէս աստուածաբանի անուան վանքում (յետագային Ռոդեսում) բացուեց ներկայ Միացեալ Համաշխարհային Կոմիսիան, յարմար տեսնուեց բանակցութիւնների օրակարգը սկսել ոչ թէ Ֆլորենսի ժողովի վերոյիշեալ հինգ հարցադրումներով, այլ կենտրոնանալ այլ թեմաների շուրջ։ Եթէ Կոմիսիան սկսեր բանակցութիւններն այն հարցերով, որ արծածուել էին Ֆլորենսի ժողովում, վտանգ կար, որ երկու կողմերը պարզապէս կրկնելու էին այն հանրածանօթ վիճաբանութիւնները, որոնք առհասարակ արծածուել էին անցեալի Կաթոլիկ-Ուղղափառ բանավէճերի ընթացքում։ Նոր, թարմ մօտեցում էր հարկաւոր։*

Այս ստրատեգիան աւելի արդիւնաւէտ եղաւ երկխօսութեան առաջին տարիների ընթացքում։ Արագ հերթականութեամբ Կոմիսիան որդեգրեց երեք իրար շաղկապուած հաղորդագրութիւններ՝ Միւնիխում (Munich, 1982)*, Բարիում* (Bari, 1987) *եւ Վալամոյում* (Valamo, 1988)[14]*, որոնց մէջ երեք հիմնական թեմաներ քննարկուեցին՝ ա. կարեւորութիւնը «Կոինոնիա» (հաղորդակցութեան), բ. առաջնակարգ նշանակութիւնը տեղական եկեղեցու եւ գ. եկեղեցու եւ պատարագի փողկապակցութիւնը։*

Համայնավարութեան փլուզումից յետոյ, Բիւզանդական Կաթոլիկ (Միարարներ (Uniate) *եկեղեցիները աշխուժացան՝ սկսած 1988 թ.՝ Ուկրաինայում, Ռումինիայում, Սլովակիայում, որոնք ճնշուել էին սկսած 1940-ական թթ., որը եւ սկսեց լարուածութիւն առաջացնել Միացեալ Կոմիսիայի գործունէութեան ոլորտում։ 1993 թ. Բալամանդի հանդիպման ընթացքում Կոմիսիան բանաձեւեց մի չորրորդ հաղորդագրութիւն՝ «Միարարութեան», որը լուսաբանում է անցեալի եւ ներկայի որոնումը լիուլի հաղորդակցութեան»*[15]*, եւ որը ենթարկւում է քննադատութեան բազմաթիւ Բիւզանդացի կաթոլիկների կողմից եւ ընդհանրապէս չունի այն նոյն հեղինակութիւնը, որն ունեն առաջին երեք հաղորդագրութիւնները (Միւնիխ, Բարի եւ Վալամօ)։*

Առաջին ութ տարիների շինիչ բանակցութիւնների առաջխաղացումը (1980-1988 թթ. ժամանակահատուածում) Ուղղափառ եւ Կաթոլիկ եկեղեցիների միջեւ սկսեց դանդաղել եւ Բալամանդի անյաջող հանդիպումից յետոյ (1993 թ.) խափանման վտանգ էր սպառնում ողջ բանակցութիւններին։ Բարեբախտաբար այդ չպատահեց։ Որոշ ժամանակի լռութիւնից յետոյ, Միացեալ Կոմիսիան հրապարակեց մի յաւելեալ համաձայնագիր, որը որդեգրուեց Ռավեննայում 2007 թ.։ Վերոյիշեալ թղթի վերնագիրը՝ «Եկեղեցաբանական եւ Կանոնական հետեւանքները եկեղեցու ծիսակատարողական նկարագրի։ Եկեղեցական Հաղորդութիւն, յաշտարար միակեցութիւն եւ հեղինակութիւն»[16]։ *Այստեղ, առա-*

---

[13] Այս հինգ խնդիրները գրեթէ նոյն հերթականութեամբ բնաբերկում է Միքայէլ Վրդ. Զամչեանն իր «Վահան Հաւատոյ ուղղափառութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ», Տէր Յովհաննէս Խաչկեան Խաչակիր Աւ. Քհնյ. (Հրատարակիչ), Կալկաթայ, 1873։ Հեղինակն իր «**Յաղագս ազատ գոլոյն եկեղեցւոյն Հայոց ի հերետիկոսութենէ եւ ի հերձուածողութենէ**»-ն սկսում է այս յայտարարութեամբ. «Թէ ուղղափառութիւն հայոց ոչ արատաւորի ի բանից վայրախօսաց և չարախօսաց։ Զոր ինչ միանգամ խօսեցաք ի սկզբանէ մատենիս մինչև ցարդ, իբր և զլոյս պայծառացեալ ցուցանեն զողջամտութիւն և զուղղափառութիւն և բարեկարգութիւն եկեղեցւոյ հայաստանեայց, ոչ եթէ մերովս ասութեամբ, այլ իրացն իսկութեամբ, բանզի մեք սովին մատենագրութեամբ … այլ միայն ի հանդէս ատենի իբրեւ ի վերայ աշտանակի եդաք առ ի փարատել զստուերս խաւարեցուցիչս» (էջ 103)։

[14] Երեք հաղորդագրութիւնները տե՛ս **Jeffrey Gros**, **Harding Meyer**, եւ **William G. Rusch** (eds.) Growth in Agreement II: Reports and Agreed Statement of Ecumenical Conversations on a World Level 1982-1998, Geneva: WCC, MI-Cambridge, 2000, pp. 652-668, 671-679.

[15] Gros Meyer եւ Rusch, նշ. աշխ., pp. 680-685

[16] Բնագիրը տե՛ս **J. Chryssavgis** (ed.). նշ. աշխ., vol. l: Historical and Theological Perspectives, St. Vladimir's Seminary Press,2016, pp.405-420

ջին անգամ լինելով, ուղղակի արծարծում է Պապի գերագահութեան հարցը, թէեւ, ինչպէս կը տեսնենք, Ռավեննայի հաղորդագրութիւնը ոչ մի ակնարկութիւն չի պարունակում տուեալ հարցի շուրջ։

Նոմիրապետական երեք աստիճանների հեղինակութիւնը

Ռավեննայի հաղորդագրութեան հիմնահարցերից մէկը վերաբերում էր երեք աստիճանի դասակարգութեան հեղինակութեան դրսեւորմանը եկեղեցում՝ տեղական, շրջանային եւ տիեզերական։ Տեղական հարթակի վրայ գործում է եպիսկոպոսի հեղինակութիւնը իր թեմից ներս։ Եպիսկոպոսի հեղինակութիւնը շրջանի վրայ ճանանչւում էր, երբ նա հանդէս էր գալիս որպէս առաջնորդ մի խումբ թեմերի, եւ յիշեալ թեմերի առաջնորդները նրան համարում են «առաջինը իրենց մէջ»՝ ըստ Առաքելական կանոնի 34 յօդուածի։ Գործնականում, աշխարհասփիւռ Ուղղափառ եկեղեցիների պարագայում, այս շրջանային իշխանութիւնը գործադրում են տարբեր պատրիարքները եւ անկախ (Autocephalous) *եկեղեցիների պետերը։ Երրորդ՝ կան առաջնորդ կամ առաջնորդներ (Հռոմի Պապը, պատրիարքները եւ պաթողիկոսները), որոնց հեղինակութիւնը տարածւում է ողջ եկեղեցու վրայ։*

Հռոմի Պապն ունի հեղինակութիւն երեք դասակարգութեան մակարդակների վրայ միաժամանակ.

1. Նա եպիսկոպոսն է տեղական թեմի՝ Հռոմ քաղաքի,

2. Պատրիարքն է ողջ Արեւմտեան կամ Լատին եկեղեցու,

3. Նա իրեն համարում է ընդհանուր եկեղեցու միակ գլուխը եւ պետը Աստուծոյ քահանայապետութեան ողջ եկեղեցու վրայ՝ թէ՛ արեւմուտքում, եւ թէ՛ Արեւելքում[17]*։*

Ուղղափառ եկեղեցիները, մասնաւորապէս նրանք, որ պատկանում են Կ. Պոլսոյ պատրիարքութեանը, երկու եկեղեցիների բաժանումից յետոյ, Կ. Պոլսոյ պատրիարքը նոյնպէս ստանում է տիեզերական կարգապետութիւն՝ Ուղղափառ եկեղեցիների ընտանիքից ներս։ Բայց Ուղղափառ եկեղեցիների պարագային տարակարծութիւն կայ անդամների միջեւ, թէ ինչպէս սահմանել տիեզերական պատրիարքի հեղինակութեան եւ իրաւասութեան սահմանները։ Ռուսաց եկեղեցին չմերժելով Կ. Պոլսոյ պատրիարքի աւագութիւնը եւ առաջնութիւնը Ուղղափառ եկեղեցիների ընտանիքի մէջ, այնու ամենայնիւ սահմանափակում է նրա իրաւունքները։ Մինչ Ռուսաց եկեղեցին ընդունում է տիեզերական պատրիարքի առաջնութիւնը Ուղղափառ եկեղեցիների շրջանակում, բայց չի ընդունում, որ պատրիարքի իրաւասութիւնները հաւասարւում են այն իրաւասութեանը, որ Հռոմի Պապը վայելում էր եկեղեցիների բաժանումից առաջ։

Ռավեննայում եկեղեցական հեղինակութեան դասակարգումը երեք աստիճանների, ունեցաւ յետին շատ հետեւանքներ տարբեր ուղղութիւններով թէ՛ Հռոմի Կաթոլիկ, եւ թէ՛ Ուղղափառ եկեղեցիների համար։ Թէ՛ Կաթոլիկները, եւ թէ՛ Ուղղափառները իրարից տարբեր միջոցներով փորձել են եռայարկ սխեման իջեցնել երյարկի։ Հռոմի Կաթոլիկների համար դժուար չէր ընդունել առաջին եւ վերջին կարգերը (պապ եւ

---

[17] Զամչեան Միքայէլն իր «Յաղագս նախագահութեան Առաքելական Աթոռոյն» գլխում գրում է. «Վստահութեամբ ասեմ թէ հակառակորդք մեր փոխանակ գովելոյ զհայս իբրև առաւել քան զամենայն արեւելեան ազգս հաւատարիմ առաքելական աթոռն, յանիրաւի պարսաւեն իբրև մերժող նորին կամ չընդունող նախագահութեան յաջորդին Պետրոսի» (էջ. 78)։ Հմմտ. Եղիշէ Վարդապետ Տէրտէրեան, «Ակամայ անդրադարձութիւնք Ս. Գրիգոր Պետրոս Ժե Աղաջանեան կաղինալին իր Հովուական Թուղթերուն առիթով», Ս. Էջմիածին, Ապրիլ-Յունիս (1951), էջ 25-37։

եպիսկոպոսութիւն), իսկ միջանկեալ շրջանային առաջնութեան կարգն անտեսել։ Այս է պարագան. օրինակի համար 1995 թ. "Ut Unum Sint" Կոնդակում՝ հրապարակուած Յովհաննէս Պօղոս II Պապի կողմից, անտեսուած է շրջանային առաջնութեան կարգը։ Նման դիրքորոշում որդեգրուեց 2006 թ. «Annuario Pontificio» տարեգիրքը խմբագրողների կողմից, ովքեր արհամարեցին Պապի համար աւանդական դարձած «Պատրիարք Արեւմուտքի» տիտղոսի կիրառումը։ Խօսք չկայ, որ Ուղղափառները խորապէս վիրաւորւում են այս կամաւոր բացթողման համար, քանի որ այն մեկուսացնում է Հռոմի եպիսկոպոսին ողջ ստեղծուած, իրարից տարբեր, աստիճանի առաջնութիւններից։ Հետեւաբար՝ շատ խրախուսիչ է, որ Ռաւեննայի ժողովին մասնակցող Կաթոլիկ ներկայացուցիչները միաձայն հաստատեցին վերոյիշեալ որոշումը՝ բացայայտօրէն ընդունելով շրջանային առաջնորդների կարեւոր դերը եկեղեցում։

Սակայն, եթէ Ռաւեննայի երեքծալ աստիճանաւորումը կարեւոր հետեւանքներ ունի Հռոմեական Կաթոլիկ եկեղեցու եկեղեցաբանութեան մշակման ասպարէզում, ապա ունի ոչ աւելի պակաս հետեւանքներ Ուղղափառ եկեղեցիների համար։ Այնտեղ, որտեղ կաթոլիկութիւնը անտեսում է երկրորդ աստիճանը, այսինքն շրջանի առաջնութիւնը, շատ ուղղափառներ բացարձակապէս հերքում, արհամարհում են երրորդ աստիճանը՝ այս պարագային ընդհանրական առաջնութիւնը։ Անկարելի չէ գտնել Ուղղափառ եկեղեցու մի պատուիրակ, որ Պապին չհամարի ամենաաւագը եւ առաջինը պատրիարքների շարքում, բայց հակառակ են նրան վերագրելու որեւէ առանձնայատուկ իրաւական կարգավիճակ՝ (status) որպէս գլուխ ողջ Ընդհանրական եկեղեցու։ Նոյն տրամաբանութեամբ նրանք մերժում են նաեւ նրան վերապահել միակ խարիզմայի կամ անսխալականութեան շնորհը, որը չի վերապահւում միւս եպիսկոպոսներին։ Տիեզերական Պատրիարք Դեմէտրիոս Առաջինն իր 973 թ. ճառի մէջ յայտարարում է. «Ոչ մի եպիսկոպոս Քրիստոնէութեան մէջ արժանի չէ այդ նախապատուութեանը՝ Քրիստոսի Մէկ, Սուրբ, Ընդհանրական եւ Առաքելական եկեղեցու մէջ մենք բոլորս համեստ եւ պարզ եպիսկոպոսներ ենք՝ ենթակայ մէկ Գերագոյն Քահանայապետի եւ գլուխ եկեղեցւոյ, որն է Յիսուս Քրիստոս»[18]:

Ինչպիսի՞ ընդհանրական նախակարգութիւն է պէտք

Բացայայտ է, որ Ռաւեննայի ժողովին մասնակցողները համամիտ չէին Դեմետրիոս Պատրիարքի տեսակէտին, որովհետեւ նրանք բացայայտօրէն հաստատեցին, որ «գերագահութեան կարիքն ընդհանրական մակարդակի վրայ ընդունուած եղելութիւն է երկու կողմերի՝ արեւելք եւ արեւմուտք»[19], բայց մինչ առաջնութեան այս սկզբունքը, տիեզերական մակարդակի վրայ ընդունելի էր թէ՛ կաթոլիկների, եւ թէ՛ ուղղափառների կողմից. չկար դեռեւս լիուլի համաձայնութիւն, թէ ինչպէ՞ս կարելի է այն գործադրել։ Ինչպէս Ռաւեննայի համաձայնագիրը շեշտում է, երկու կողմերն էլ համաձայն են, որ եկեղեցին «անբաժան էր», մշակուել էր «Կանոնական տաճիս», որ վճռորոշել է մեծ աթոռների հերթականութիւնը արեւելքում եւ արեւմուտքում, եւ որ այս տաճիսն ընդունուել էր Հռոմի եւ Կ. Պոլսոյ կողմից։ Ռաւեննայի յուշագրությունը շարունակում է.

«Նրանք նաեւ իրենց համաձայնութիւնը տուին, որ Հռոմը, որպէս այն եկեղեցին, որ

[18] Դեմետրիոս Ա. Պատրիարքի նամակը Կարդինալ Վիլլեբրանդին 30 Նոյեմբեր, 1973 թ. **E. J. Stormon** (ed.), Ecumenical Documents III. Towards the Healing of Schism: The Sees of Rome and Constantinople. Public statements and correspondence between the Holy See and the Ecumenical Patriarchate **1958-1984**, New York, **1987**, pp. **311**, **260**.

[19] The Ravenna Document, **43** Chryssavgis, Primacy in the church, նշ. աշխ., vol. I, pg. **419**.

«նախագահում է սիրով»՝ համաձայն Սուրբ Իգնատիոս Անտիոքացու (Նամակ ուղղուած Հռոմայեցիներին), զբաղեցնում է առաջին տեղն այդ տարիսի մէջ եւ որ Հռոմի եպիսկոպոսը համարւում էր առաջինը (protos) Պատրիարքների շարքում: Նրանք սակայն չեն ընդում այն մեկնութիւնը, որն անցեալում տրուել էր այն պատմական վկայութեանը, որ Հռոմի եպիսկոպոսն ունի արտօնեալ բացառիկ շնորհը «առաջնութեան» (protos). մի հասկացողութիւն, որ տարբեր էր ընկալւում [Քրիստոնէութեան] առաջին հազարամեակում[20]:

Հետեւաբար, Ռավեննայի ժողովի պատգամաւորներն ընդունում են, որ միայն սկիզբն են դրել մի որոշումի, ճշմարտապէս սկիզբը մի շատ նշանակալից քայլի, որ Պապի տիեզերական առաջնութեան խնդրի վերջնական լուծմանը պիտի վերադառնան աւելի ուշ:

«Մնում է յստակեցնել Հռոմի եպիսկոպոսի դերը եկեղեցիների փոխյարաբերութիւնների մէջ աւելի հանգամանօրէն: Ի՞նչ է լինելու «առաջին աթոռի» դերը եկեղեցաբանութեան մէջ, որի դիտակէտն է «յաշտ բարեկեցութիւն»-ը: Ինչպէ՞ս պէտք է ընկալուեն Վատիկանի Առաջին եւ Երկրորդ ժողովների որոշումները տիեզերական գերագահութեան հարցում եւ իրագործելի դարձնեն առաջին հազարամեակի եկեղեցաբանութեան աւանդոյթների լուսարձակի տակ»[21]:

Ռավեննայի ժողովի դիրքորոշումը «հիմնական հարցերի» վերաբերեալ գոհացուցիչ լուծում չգտաւ: Ի՞նչ է պատահել վերջին տարիներին: Պէտք է խոստովանել, որ շատ քիչ առաջադիմութիւն է արձանագրուել. արդար կը լինէր ասել՝ աւելի յետընթաց, քան առաջընթաց: Սրա հիմնական պատճառը Ռուսաց եկեղեցու երկու պատգամաւորների բացակայութիւնն էր Ռավեննայի՝ 2007 թ. ժողովից: Ժողովի բացման օրը (9 Հոկտեմբեր), Ռուսաց եկեղեցու երկու պատգամաւորները՝ Մետրոպոլիտեն Հիլարիոնի գլխաւորութեամբ (այժմ Ալֆէեւ) հրաժարուեցին իրենց մասնակցութիւնը բերելուց: Ժողովից հեռանալու պատճառը ոչ մի կապ չունէր Ռուս-Կաթոլիկ եկեղեցիների յարաբերութեան ոլորտի հետ, այլ հրաժարուեցին խորհրդակցութիւններից, որովհետեւ նրանք հակառակ էին էստոնիայի եկեղեցու ներկայացուցչի մասնակցութեանն Ուղղափառ եկեղեցիների պատգամաւորների շարքում՝ որպէս ինքնավար եկեղեցի ճանաչուած Կ. Պոլսոյ, բայց ոչ Մոսկուայի Պատրիարքութեան կողմից: Այնու ամենայնիւ, Մոսկուայի պարուիրակութեան բացակայութիւնը նշանակում է, որ Ռուսաց եկեղեցին չստորագրեց Ռավեննայի ժողովի փաստաթղթերը եւ դրա հետեւանքով չի կարելի «Ընդունուած Համաձայնագիրը» *նկատել վաւերական՝ համահաւասար առաջին երեք՝ Միւնիխ, Բարի, Վալամօ եւ նոյնիսկ մերժուած Բալամանդի համաձայնագիրներին:*

Ոչ վաղ անցեալում Ռուսաց եկեղեցու դիրքն աւելի պարզաբանուել է «Արտաքին յարաբերութիւնների» մի տեղեկատուութեամբ՝ վերնագրուած «Մոսկուայի Պատրիարքութեան դիրքը Տիեզերական եկեղեցու առաջնութեան խնդրի շուրջ»՝ *հրապարակուած 26 Դեկտեմբեր, 2013 թ.*[22]*: Այս փաստաթղթի մէջ ասւում է, թէ Ռուսաց եկեղեցին «հակառակ» է, այլ խօսքով մերժում է, Ռավեննայի համաձայնագրի այն հատուածը, որը Հռոմի նախաթոռութեան որոշումը դնում է Տիեզերական Եկեղեցու մակարդակին*[23]*: Հռոմի առաջնութիւնը (կամ Կ. Պոլսոյ) Տիեզերական մակարդակի վրայ դնելը պէտք է համարել պարզ* «նախապատուութիւն եւ յարգանք»: «Նախապատուութիւն եւ յարգանք»-ը

[20] The Ravenna Document, 41.

[21] The Ravanna Documents, 41, Chryssavgis, նշ. աշխ., vol. I, pg. 419.

[22] John Chryssavgis, Primacy in the Church, vol. I, pp. 421-430.

[23] John Chryssavgis, Primacy in the Church, vol. I, pg. 421.

չի պարտաւորեցուում Տիեզերական կամ տեղական ժողովների կանոններում, այլ խօսքով, դրա ստոյգ իրաւասութեան սահմանները չեն բնութագրուած Ուղղափառ եկեղեցու կանոնական աւանդոյթի մէջ։ Կանոնները Հռոմի եպիսկոպոսին չեն վերապահում իշխանութիւն Ընդհանրական եկեղեցու վրայ։ Եկեղեցիների ղեկավարութեան պարտականութիւնը յանձնուած է առաջնորդներին եւ ընդունելի չի կամայականօրէն փոխանցել «տիեզերական մակարդակի»[24]։ Ոչ մի եկեղեցական կանոն չի լիազօրում Հռոմի եպիսկոպոսին «իրաւասութիւն ընդարձակելու իր հսկողութիւնը այլ եկեղեցիների սահմանների վրայ»։ Յարգանքի առաջնութիւնը՝ տրուած Հռոմի եպիսկոպոսներին, չի սահմանուել Աստուծոյ կողմից, այլ լոկ մարդկային մեծարանքի կեցուածք է՝ հանդէպ Հռոմի աթոռին, ի յարգանս Պետրոս եւ Պօղոս հիմնադիր առաքեալներին եւ երբեք տիեզերական մասշտաբով չի եղել իշխանութեան կենտրոն։ Պատուոյ առաջնակարգութիւնը չի նշանակում առաջնութիւն «իշխանութեան»[25]։ Պապի առաջնութեան պատիւը տալիս են նաեւ արեւելքում, բայց առանց այդ հանգամանքից որեւէ քաղաքական-իրաւական եզրակացութիւն հանելու, նա միայն առաջինն է հաւասարների մէջ (primus inter pares)[26]։ Ռուսաց եկեղեցու դիրքը հաստատող փաստաթղթի ընթերցումից յետոյ պարզւում է, որ Ռուսաց եկեղեցու դիրքորոշումը վերաբերում է ոչ միայն Հռոմի Պապի առաջնութեանը, այլ նաեւ Կ. Պոլսոյ Տիեզերական Պատրիարքին։

Ամփոփենք։ Ակնյայտ է, որ Ռուսաց եկեղեցին մերժում է այն իրավիճակը, որ Հռոմի Կաթոլիկ եկեղեցին ունի տիեզերական իշխանութիւն ողջ Քրիստոնեայ եկեղեցիների վրայ, որը ներառում է թէ՛ Արեւելքը, եւ թէ՛ Արեւմուրքը։ Այս կէտում, առանց վարանումի, ամէն Ուղղափառ եկեղեցի, եւ մասնաւորապէս Տիեզերական Պատրիարքը, համաձայնութեան մէջ են, թէեւ վերջիններս իրենց ընդդիմութիւնն արտայայտում էին աւելի մեղմ, կշռադատուած լեզուով։ Ռավեննայի 2007 թ. հրապարակած հաղորդագրութիւնից յետոյ, Միացեալ՝ Ուղղափառ-Հռոմէական-Կաթոլիկ յանձնախումբը, զանազան հանդիպումներ է անցկացրել։ Փորձեր են կատարուել ստոյգ բանաձեւում մշակել Հռոմի Պապի տիեզերական առաջնակարգութեան վերաբերեալ, սակայն ոչ մէկն առ այսօր չեն վաւերացուել երկկողմանի բանակցութիւններում։

Յանձնաժողովի Վերջին հանդիպումը տեղի ունեցաւ 15-22 Սեպտեմբեր, 2016 թուականին։

Յուսալի եւ դրական աղօթքով եզրափակելու այս հետադարձ հայեացքը, պատշաճ կը լինի մէջբերել Ռուս նշանաւոր աստուածաբան հայր Սէրգիոս Բուլգակովի աղօթքը՝ գրուած եկեղեցիների միութեան համար.

«Ով Յիսուս Քրիստոս, մեր Տէրը եւ Փրկիչը,

Դու մեզ խօստացար լինել մեզ հետ ընդմիշտ.

Դու բոլոր Քրիստոնեաներին պատուիրեցիր մօտենան իրար եւ հաղորդուեն Քո Մարմնով եւ Արեամբ,

Բայց մեր մեղքերը մեզ բաժանում են

Եւ մենք չունենք քաջութիւնը միասնաբար մասնակցելու Քո Սուրբ Պատարագին

---

[24] Chryssavgis John, Primacy in the Church, vol. I, pp. 421-430.

[25] Chryssavgis John, Primacy in the Church, vol. I, pp. 428-439.

[26] Հայաստանեայց եկեղեցու Կաթողիկոսների եւ Հռոմի Պապերի փոռձերը վերականգնել երկու եկեղեցիների համացոռծակցութիւնը։ Տե՛ս **Dr. Nerses Nersessian**, ”The See of Holy Etchmiadzin and the Vatican: A chronicle of the contacts between Armenian Catholicoi and Popes “, Sion, 1-3 & 4-7 (2021), pp. 78-87 and 183-195

Մենք խոստովանում ենք մեր մեղքը եւ աղօթում Քեզ.
Ներիր եւ օգնիր մեզ՝ ծառայենք յաշտութեան Քո գծած ուղիին ըստ Քո կամքին
Բոցավառուի Մեր սրտերը Քո Սուրբ Հոգու կրակով։
Տուր մեզ հոգին իմաստութեան եւ հաւատքի,
Համարձակութեան եւ համբերութեան,
Խոնարհութեան եւ հաստատամտութեան,
Սիրոյ եւ թողութեան.
Միջնորդութեամբ եւ աղօթիւք ամէնօրհնեալ Մայր Սուրբ Աստուածածնի[27]։

ԴՈԿՏ. ՆԵՐՍԷՍ ԱԻ. ՔՀՆՅ ՆԵՐՍԷՍԵԱՆ

[27] **Zernov Nicholas**, Russian religious Renaissance of the Twentieth century, London, 1963.